ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2023-9-6-Ա

ք. Երևան 04.12.2023թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2023 թվականի դեկտեմբերի 4-ի նիստում քննարկեց 2023 թվականի հունիսի 12-ին արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված «Քրիզանտի թրեյդինգ լիմիթեդ» ՍՊԸ ընկերության (Agia Zoni, 33B, flat/office 203, 3027 Limassol, Cyprus, CY) «ARMTEK» (No20221582) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 93-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված «ARMTEK» նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ նշանի սկզբնամաս հանդիսացող «ARM» տարրը հանդիսանում է Հայաստան, հայկական բառերի կրճատ ձևը և սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների աշխարհագրական ծագման և դրանց արտադրողի, ինչպես նաև ծառայություններ մատուցողի վերաբերյալ հարցերում: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը որպես ապրանքային նշան ենթակա չէ գրանցման

12-րդ դասի ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «Amtech» (Սարգիս Ռուբիկի Մովսիսյան, Արագածոտնի մարզ, գ. Արայի 10, տուն 3 AM N 33086 02.08.2021) համակցված ապրանքային նշանի առկայության պատճառով: Կարգի 119-րդ կետի 2-րդ ենթակետի, 122-րդ ենթակետի 8-րդ, 9-րդ ենթակետերի համաձայն բառային ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր: Տվյալ դեպքում համեմատվող ապրանքային նշանների բառային տարրերն ունեն ձայնային նմանություն, որը որոշվել է նշանների բաղաձայնների կազմի մոտիկությամբ և համընկնող մասերի բնույթով՝ «ARMTEK(CH)»:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքը մերժելու, փորձաքննության որոշումը ուժի մեջ թողնելու վերաբերյալ, քանի որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների կամ ծառայությունների աշխարհագրական ծագման, դրանց որակի, բնույթի կամ արտադրողի վերաբերյալ հարցերում: Տվյալ դեպքում հայտարկված «ARMTEK» նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ նշանի սկզբնամաս հանդիսացող «ARM» տարրը հանդիսանում է Հայաստան, հայկական բառերի կրճատ ձևը և սպառողներին կարող է մոլորության մեջ գցել ապրանքների աշխարհագրական ծագման և դրանց արտադրողի, ինչպես նաև ծառայություններ մատուցողի վերաբերյալ հարցերում: Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը որպես ապրանքային նշան ենթակա չէ գրանցման 12-րդ դասի ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում գրանցման հիման վրա պահպանվող «Amtech» (Սարգիս Ռուբիկի Մովսիսյան, Արագածոտնի մարզ, գ. Արայի 10, տուն 3 AM N 33086 02.08.2021) համակցված ապրանքային նշանի առկայության պատճառով:

Բողոքարկողը համաձայն չէր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 6-ի N774-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 70-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն.

Ո Ր Ո Շ Ե Ց

Արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված «Քրիզանտի թրեյդինգ լիմիթեդ» ՍՊԸ ընկերության «ARMTEK» (No20221582) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը մերժել, փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ